# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Սեպտեմբերի 27-ին՝ ժամը 14.30-ին, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը:

*Օրակարգ*՝

| | |
|---|---|
| 1. Ֆակուլտետի խորհրդի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում: | Հ. Խաչատրյան |
| 2. Ֆակուլտետի ամբիոնների աշխատանքային պլանների և նիստերի օրակարգերի քննարկում և հաստատում: | Ամբիոնների վարիչներ |
| 3. Կրթության որակի ապահովման աշխատանքների ներկայացում: | Լ.Պողոսյան |
| Որակի բարելավման ուղղված գործընթացների մշտադիտարկում և արդյունքների գնահատում: | Ամբիոնային պատասխանատուներ |
| 4. Ֆակուլտետի խորհրդի կազմի փոփոխությունների մասին: | Հ. Խաչատրյան |
| 5. | Ա. Դալլաքյան |

- Ուսումնական գործընթացի կազմակերպման հարցեր*(առկա և հեռակա ուսուցման համակարգեր):*
- 2021-2022 ուստարվա քննաշրջանի և լուծարային փուլերի արդյունքներ *(առկա և հեռակա ուսուցման համակարգեր):*

| | |
|---|---|
| 6. Մանկավարժական պրակտիկաների ընթացքի և նախապատրաստական աշխատանքների մասին. | Ա. Միքայելյան<br>Ա. Ղազարյան |

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր (ուսումնաճանաչողական պրակտիկա),
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ (ամփոփիչ-գնահատողական պրակտիկա) և մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր (մանկավարժահետազոտական պրակտիկա),
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ»,

«Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ, 5-րդ կուրսեր (կիրառական-վերլուծական):

7. Հետազոտական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ կատարված աշխատանքների ներկայացում, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում: Հ. Խաչատրյան Ամբիոնների վարիչներ

8.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - **1.** Ֆակուլտետի խորհրդի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:

*Զեկուցող՝ Հ.Խաչատրյան*

*/Աշխատանքային պլանը կցվում է:/*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Մ.Իսպիրյանը, Ս.Մարությանը, Լ.Պողոսյանը, Ք.Հովհաննիսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ - **2**. Ֆակուլտետի ամբիոնների աշխատանքային պլանների և նիստերի օրակարգերի քննարկման և հաստատման հարցը:

*Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ*

*/Աշխատանքային պլանները կցվում են:/*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Հ.Խաչատյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել ամբիոնների՝ 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանները:

ԼՍԵՑԻՆ - **3.** Կրթության որակի ապահովման աշխատանքների ներկայացում: Որակի բարելավմանն ուղղված գործընթացների մշտադիտարկում և արդյունքների գնահատում:

*Զեկուցող՝ Լ.Պողոսյան,*

*Ամբիոնային պատասխանատուներ*

*Լ. Պողոսյանը տեղեկացրեց, որ որակի պատասխանատուների աշխատանքների համար առանձնացված է 30 ժամ, պետք է կազմվի աշխատանքային հանդիպումների գրաֆիկ (ամիսը երկու հանդիպում հաշվարկով):*

*Փոխդեկանը ամբիոնների վարիչներին առաջարկեց նաև ամբիոններում քննարկել նախորդ տարվա՝ ուսանողների կարիքների բացահայտմանն ուղղված հարցման արդյունքները և արդեն առաջիկա կիսամյակում փորձել կյանքի կոչել դրանք՝ համապատասխան լուծումներ տալով:*

*Լ.Պողոսյանը նշեց նաև, որ պահանջ է դրված հատուկ հանդիպումներ ունենալու գործատուների հետ՝ փորձելով կիսամյակում առնվազն մեկ անգամ քննարկումներ իրականացնելով՝ բացահայտել աշխատաշուկայի կարիքները: Ընդ որում, նշվեց, որ դպրոցների և մանկապարտեզների տնօրենների հետ հանդիպումներն ու քննարկումները կարևոր և շահեկան են երկուստեք՝ մի կողմից՝ բուհը կարող է այս ճանապարհով իր նորարարական մոտեցումները դպրոց հասցնել, մյուս կողմից՝ դպրոցում կազմակերպել ուսանողների հետազոտական աշխատանքները:*

*Փոխդեկանը հատուկ անդրադարձավ նաև ուսանողների կողմից ինքնուրույն աշխատանքներ կատարելու կարողությունների զարգացման ու կատարելագործման անհրաժեշտությանը և դասընթացներում հատկապես այս հանգամանքի վրա ուշադրություն դարձնելուն:*

*Առաջարկ եղավ ամբիոնների վարիչներին՝ հետևելու և պահանջելու, որ կիսամյակի վերջում դասախոսներն իրականացնեն յուրաքանչյուր դասընթացի վերլուծություն՝ թերություններն ու խնդիրները վեր հանելու և դասավանդման արդյունավետությունը բարելավելու նպատակով:*

*Լ.Պողոսյանը նշեց նաև, որ անհրաժեշտություն կա հաստատելու որակի ապահովման հանձնախմբի՝ յուրաքանչյուր ամբիոնից մեկական թեկնածուի ընտրությունը ( Լ.Պողոսյան, Մ.Դավթյան, Ա.Միքայելյան, Մ.Ամիրաղյանի):*

*Անցավ միաձայն:*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյան, Ք.Ասմարյանը, Գ.Հայրապետյանը, Հասմիկ Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

**2**. Հաստատել ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի հետևյալ կազմը

***Լուսինե Պողոսյան***–սկզբնական կրթության ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության գծով դեկանի տեղակալ , մ.գ.թ., դոցենտ,

***Մելանյա Բարսեղյան*** - Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ,

***Արմինե Միքայելյան***- Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,

***Մարիաննա Ամիրաղյան***- Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս:

**ԼՍԵՑԻՆ -** **4.** Ֆակուլտետի խորհրդի կազմի փոփոխությունների մասին:

*Զեկուցող՝ Հ.Խաչատրյան*

*/Խորհրդի կազմի վերաբերյալ ցուցակը կցվում է/*

*Դեկան Հ.Խաչատրյանը տեղեկացրեց խորհրդի կազմում կատարված փոփոխությունների մասին, մասնավորապես՝ խորհրդի կազմում նոր անդամի՝ պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանի, Նաիրա Տողանյանի՝ որպես դպրոցի ներկայացուցիչ՝ տնօրեն, ընդգրկվելու, Սուսաննա Գրիգորյանի՝ խորհրդի կազմից դուրս գալու, այլև մի քանի նոր ուսանողների՝ խորհուրդի կազմում ընդգրկվելու մասին:*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Լ.Տեր-Գրիգորյանը, Ք.Հովհաննիսյանը, Ա.Մարտիրոսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** Ընդունել ի գիտություն:

**ԼՍԵՑԻՆ -** 5. Ուսումնական գործընթացի կազմակերպման հարցեր:

- Ուսումնական գործընթացի կազմակերպման հարցեր*(առկա և հեռակա ուսուցման համակարգեր):*
- 2021-2022 ուստարվա քննաշրջանի և լուծարային փուլերի արդյունքներ *(առկա և հեռակա ուսուցման համակարգեր):*

*Զեկուցող՝ Ա.Դալլաքյան*

*/Հաշվետվությունները կցվում են:/*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Հ.Խաչատրյանը, Ք.Հովհաննիսյանը, Ք.Ասմարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** Ընդունել ի գիտություն:

**ԼՍԵՑԻՆ -** **6.** Մանկավարժական պրակտիկաների ընթացքի և նախապատրաստական աշխատանքների մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր (ուսումնաճանաչողական պրակտիկա),
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ (ամփոփիչ-գնահատողական պրակտիկա) և մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր (մանկավարժահետազոտական պրակտիկա),
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ»,

«Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ, 5-րդ կուրսեր (կիրառական-վերլուծական):

*Զեկուցողներ՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան*

*/Հաշվետվությունները կցվում են/*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Ք. Հովհաննիսյանը, Հ.Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

**Լսեցին- 7.** Հետազոտական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ կատարված աշխատանքների ներկայացում, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում:

*Հաղ.՝ Հ.Խաչատրյան, ամբիոնների վարիչներ*

*Ամբիոնների վարիչները ներկայացրին, որ աշխատանքներն առայժմ ընթացքի մեջ են և կազմակերպվում են բնականոն հունով:*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Լ.Պողոսյանը, Ա.Դալլաքյանը, Ա.Մարտիրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ առաջիկա տասը օրերի ընթացքում ամփոփել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների բաշխման և ղեկավարների ընտրության աշխատանքները և թեմաների ցանկերն ավարտուն տեսքով ներկայացնել դեկանատ հաջորդ նիստում հաստատելու համար:

*Ընթացիկ հարցեր*

ԼՍԵՑԻՆ - 1. Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի առկա ուսուցման համակարգի ասպիրանտ *Մերի Անդրանիկի Հովհաննիսյանի՝ «Մաթեմատիկական գործունեության տեսակները որպես կրտսեր դպրոցականի քննադատական մտածողության զարգացման միջոց»* վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և ղեկավարի առաջադրման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ա.Դալլաքյանը, Ք.Հովհաննիսյանը, Ս․Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ *Մերի Անդրանիկի Հովհաննիսյանի* ատենախոսության թեման՝ «Մաթե-

*մատիկական գործունեության տեսակները որպես կրտսեր դպրոցականի քննադատական մտածողության զարգացման միջոց»* ձևակերպմամբ,և գիտական ղեկավար նշանակել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աիդա Օնիկի Թոփուզյանին:

*Ֆակուլտետի խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը, որոնցից կողմ քվեարկեցին 22-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:*

**ԼՍԵՑԻՆ -** 2. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի ասպիրանտ *Նաղյա Սայադյանի՝ «Ավագ նախադպրոցականի օտարալեզու բառապաշարի զարգացման մեթոդական համակարգն առցանց խաղերի միջոցով»* վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի առաջադրման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Հ.Խաչատրյանը, Լ.Պողոսյանը, Ք.Հովհաննիսյանը, Ք.Սամարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** ՀՊՄՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի ասպիրանտ *Նաղյա Սայադյանի* ատենախոսության թեման՝ *«Ավագ նախադպրոցականի օտարալեզու բառապաշարի զարգացման մեթոդական համակարգն առցանց խաղերի միջոցով»* ձևակերպմամբ, և գիտական ղեկավար նշանակել մ.գ.թ., դոցենտ Արմենուհի Մանուկյանին:

*Ֆակուլտետի խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը, որոնցից կողմ քվեարկեցին 22-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:*

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Հոկտեմբերի 11-ին՝ ժամը 11.00-ին տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը *(բանավոր հարցում):*

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 25-ը։

*Օրակարգ*՝

«ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողներին անվանական կրթաթոշակների տրամադրման» կարգի 7-րդ կետին հավակնորդ սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների թեկնածություններ առաջադրելու հարցը։

**Լսեցին**- «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողներին անվանական կրթաթոշակների տրամադրման» կարգի 7-րդ կետին հավակնորդ սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների թեկնածություններ առաջադրելու հարցը։

*Զեկուցող՝ Հ.Խաչատրյան*

**Որոշեցին**- «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողներին անվանական կրթաթոշակների տրամադրման» կարգի համաձայն՝ կրթաթոշակի ներկայացնել Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի Բելլա Սեյրանի Պետրոսյանի թեկնածությունը։

Կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0։

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Հոկտեմբերի 31-ին՝ ժամը 14.30-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը:

*Օրակարգ՝*

| | |
|---|---|
| 1. Ավարտական աշխատանք (առկա ուսուցման համակարգի ԲԿԾ 4-րդ և հեռակա ուսուցման համակարգի ԲԿԾ 5-րդ կուրսեր ), մագիստրոսական թեզ գրող ուսանողների (առկա և հեռակա ուսուցման համակարգերի ՄԿԾ 1-ին կուրսեր) ղեկավարների և թեմաների հաստատում: | Հ. Խաչատրյան<br>Ամբիոնների վարիչներ |
| 2.Ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության աշխատանքային պլանների քննարկում և հաստատում: | ՈՒԽ և ՈՒԳԸ<br>նախագահներ |
| 3.Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին.<br>հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրս (մանկավարժահետազոտական պրակտիկա): | Ա. Միքայելյան<br>Լ.Պողոսյան |
| 4.<br>• Հեռակա ուսուցման համակարգում կրթական, ուսումնական գործընթացին առնչվող հարցերի քննարկում:<br>2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-4-րդ կուրսերի 2-րդ կիսամյակի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում: | Ա. Դալլաքյան<br>Ամբիոնների վարիչներ |
| 5.Կրթության որակի ապահովման ներամբիոնային աշխատանքների ներկայացում, մասնագիտական առարկաների դասավանդման բարելավման ուղղությամբ առաջարկությունների, նախատեսված աշխատանքների և արդյունքների գնահատման գործընթացների մասին: | Հաղ.՝<br>Ամբիոնների վարիչներ |
| 6. ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված միջոցառումների մասին: | Հ.Խաչատրյան<br>Ամբիոնների վարիչներ |

7.Ընթացիկ հարցեր:

**ԼՍԵՑԻՆ -** **1.** Ավարտական աշխատանք (առկա ուսուցման համակարգի ԲԿԾ 4-րդ և հեռակա ուսուցման համակարգի ԲԿԾ 5-րդ կուրսեր ), մագիստրոսական թեզ գրող ուսանողների (առկա և հեռակա ուսուցման համակարգերի ՄԿԾ 1-ին կուրսեր) ղեկավարների և թեմաների հաստատում:

*Զեկուցող՝ Հ.Խաչատրյան, ամբիոնների վարիչներ*

*/Քաղվածքները կցվում են:/*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարության, Լ.Պողոսյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել:

ԼՍԵՑԻՆ - **2**. Ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:

*Զեկուցողներ՝ ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահներ*

*/Աշխատանքային պլանները կցվում են:/*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մ.Իսպիրյանը, Ա.Թոփուզյանը, Ա.Դալլաքյանը, Զ.Մանուկյանը:

Ա.Դալլաքյանը նշեց , որ աշխատանքային պլանները նախապես քննարկվել են ուսումնական աշխատանքների գծով և գիտական աշխատանքների գծով փոխդեկանների հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ՈՒԽ և ՈՒԳԸ 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանները:

ԼՍԵՑԻՆ - **3.**Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին:

*Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան, Ա.Միքայելյան*

*Ներկայացվեց հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքները:*

*/Հաշվետվությունը կցվում է:/*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյան, Զ.Գյուլամիրյանը, Գ.Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **4.** Հեռակա ուսուցման համակարգում կրթական, ուսումնական գործընթացին առնչվող հարցերի քննարկում:

*Զեկուցող՝ Ա.Դալլաքյան,*
*ամբիոնների վարիչներ*

*Անդրադառնալով հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրսերի ուսումնական գործընթացին՝ տիկին Դալլաքյանը նշեց, որ փոփոխություն է կատարվել հեռակա ուսուցման համակարգի ուսումնական գործընթացի կազմակերպման մեջ, և առաջին կուրսերի ուսանողների ուսումնական պարապմունքները նույնպես մեկնարկում են հունվարից: Այդ նպատակով ցանկալի է նախօրոք նրանց հետ հանդիպում կազմակերպել՝ ծանոթացնելու համար Classroom-ին, կրթական համակարգին և այլն:*

*Ա.Դալլաքյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ԲԿԾՀ 4-րդ կուրսի լուծարային փուլի քննությունները ավարտված չեն, և դրանց արդյունքներն ամփոփված չեն: Ուստի այդ տվյալները կներկայացվեն հաջորդ նիստին:*

*/Հաշվետվությունը կցվում է/*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Զ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը, Եվա Մնացականյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:

2. 2021-2022 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-4-րդ կուրսերի 2-րդ կիսամյակի լուծարային փուլերի արդյունքների ներկայացման հարցը տեղափոխել հաջորդ նիստ:

ԼՍԵՑԻՆ - 5. Կրթության որակի ապահովման ներամբիոնային աշխատանքների ներկայացում, մասնագիտական առարկաների դասավանդման բարելավման ուղղությամբ առաջարկությունների, նախատեսված աշխատանքների և արդյունքների գնահատման գործընթացների մասին:

*Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Լ.Պողոսյանը, Ք.Հովհաննիսյանը, Ք.Սամարյանը:

*Լ.Պողոսյանը նշեց, որ ներկայումս աշխատում են միասնական աշխատանքների և քննարկումների հիմնական ժամանակացույց կազմել՝ ամբիոն առ ամբիոն քննարկումներ և վերլուծություններ իրականացնելու համար: Ընդհանուր դիտարկումն առայժմ այն է, որ դասախոսներն իրենց դասերի կազմակերպման մեթոդիկան, կիրառվող մեթոդները և գնահատումը պետք է համապատասխանեցնեն առարկայի վերջնարդյունքներին, ոչ թե միայն առարկայի բովանդակությանը: Իսկ վերջնարդյունքներն էլ ածանցվում են կրթական ծրագրի վերջնարդյունքներից:*

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **6.** ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված միջոցառումների մասին:

*Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ*

*Զ.Գյուլամիրյանը տեղեկացրեց, որ առաջիկայում նախատեսվում է կազմակերպել ամբիոնի դասախոսների կողմից հրատարակված գիտամեթոդական գրականության ցուցահանդես և շարադրությունների մրցույթ:*

*Ք.Հովհաննիսյանը նույնպես ներկայացրեց, որ կազմակերպչական աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ:*

*/Հաշվետվությունները կցվում են/*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ալ.Դալլաքյանը, Ք. Հովհաննիսյանը, Բ.Նահապետյանը, Ա.Մարտիրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

*Ընթացիկ հարցեր*

ԼՍԵՑԻՆ - 1. Բանասիրական գիտությունների դոկտոր, Ա.Տեր-Գրիգորյանի անվան Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Եվա Ժորայի Մնացականյանին բանասիրության գծով պրոֆեսորի գիտական կոչման երաշխավորելու հարցը:

*Զեկուցող՝ Լ.Պողոսյան*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Հ.Խաչատրյանը, Ս. Մարությանը, Զ.Գյուլամիրյանը, Լ.Տեր-Գրիգորյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** Բանասիրական գիտությունների դոկտոր, Ա.Տեր-Գրիգորյանի անվան Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Եվա Ժորայի Մնացականյանին պրոֆեսորի գիտական կոչման ներկայացնելու հարցը դրական երաշխավորությամբ առաջադրել համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը:

Ֆակուլտետի խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը, որոնցից կողմ քվեարկեցին 22-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

*Անցավ միաձայն:*

**ԼՍԵՑԻՆ -** 2. Մագիստրոսական նոր կրթական ծրագիր ստեղծելու մասին հարցը:

*Զեկուցող՝ Հ.Խաչատրյան*

*Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հոկտեմբեր ամսվա նիստում առաջարկել է վերսկսել աշխատանքները նոր մասնագիտական կրթական ծրագիր ստեղծելու ուղղությամբ՝ «Նախադպրոցական կրթության որակի փորձաքննություն»: Նա նաև ներկայացրեց հարցի նախապատմությունը: Դեռևս մի քանի տարի առաջ սկսվել էին աշխատանքներ Մինսկի և Սանկտ Պետերբուրգի մանկավարժական համալսարանների հետ համատեղ առցանց նույնանուն մասնագիտական ծրագիր ստեղծելու ուղղությամբ: Աշխատանքները բովանդակային առումով ամբիոնի կողմից ծավալվել էին, պատրաստ էին կրթական ծրագիրն ու ուսումնական պլանը, դասընթացներն իրենց բովանդակությամբ ու վերջնարդյունքներով, սակայն քանի որ այդ մասնագիտությունը բացակայում էր ՀՀ կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկից, աշխատանքները հաջողությամբ ավարտել չհաջողվեց: Եվ քանի որ ամբիոնը բավականին աշխատանքներ էր կատարել, կարելի վերսկսել աշխատանքները, այդ գաղափարի կյանքի կոչելը, ուսումնասիրություններ և վերլուծություններ անել, բերել հավաստի տվյալներ մասնագիտության անհրաժեշտությունը այսօրվա աշխատաշուկայում ներկայացնելու համար:*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Ալ.Դալլաքյանը, Ա.Մանուկյանը, Ք.Ասմարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –**

1. Հավանություն տալ գաղափարին և հանձնարարել Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնին վերսկսել աշխատանքները «Նախադպրոցական կրթության որակի փորձաքննություն» մասնագիտական կրթական նոր ծրագիր ստեղծելու ուղղությամբ:
2. Որոշման և աշխատանքների ընթացքի մասին պարբերաբար տեղեկացնել ռեկտորատին, համալսարանի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությանը:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Նոյեմբերի 29-ին՝ ժամը 14.20-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը:

*Օրակարգ*՝

| | |
|---|---|
| 1. Միջազգային համագործակցության և ծրագրերի մասին: | Լ.Պողոսյան |
| 2.Ամբիոնների՝ դպրոցների, մանկապարտեզների և այլ կրթականհաստատությունների հետ համագործակցության ծրագրերի մասին: | Ամբիոնների վարիչներ |
| 3.Ասպիրանտների ատեստավորման մասին: | Մբիոնների վարիչներ |
| 4. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերը հրապարակային պաշտպանության երաշխավորելու մասին: | Ամբիոնների վարիչներ |
| 5. Մանկավարժական պրակտիկաների մասին. | Ա. Միքայելյան |

Ա. Ղազարյան
Լ.Պողոսյան

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի պրակտիկայի ընթացք (ուսումնաճանաչողական պրակտիկա),
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսերի և հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի պրակտիկայի արդյունքներ (մանկավարժահետազոտական պրակտիկա),
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսեր (ամփոփիչ-գնահատողական) արդյունքներ և պրակտիկայի թղթապանակի պաշտպանության նախապատրաստում:
- Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ»,«Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ընթացքի և արդյունքների մասին:

6.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - **1.** Միջազգային համագործակցության և ծրագրերի մասին:

*Զեկուցող՝ Լ.Պողոսյան*

Լ.Պողոսյանը կարևորեց միջազգային նոր կապերի ստեղծումը, ինչը կարևոր է ոչ միայն առարկայական նկարագրերի ու ծրագրերի համեմատական վերլուծություններ կատարելու, այլև մեր համալսարանի ամբիոններն ու նրանց կողմից իրականացվող աշխատանքը ներկայացնելու և մեր գիտական մոտեցումները, գիտամանկավարժական միտքը տարածելու տեսանկյունից:

Դարձյալ կարևորվեց, որ միջազգային համագործակցությունն իրականացվի ամբիոնների գիտական հետազոտությունների ուղղություններով, ինչը կնպաստի աշխատանքների բովանդակային ընդլայնմանն ու միջազգայնորեն հանրայնացմանը:

Կարևոր է շարունակել առցանց սեմինարների կազմակերպման ավանդույթը: Առաջարկություն եղավ մինչև փետրվար կապեր հաստատել օտար երկրների ամբիոնների հետ և փետրվարին հանդես գալ հաշվետվությամբ այս ուղղությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ա.Խուզեյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

**2**. Փետրվարին քննարկել միջազգային կապերի հաստատման աշխատանքների վերաբերյալ ամբիոնների հաշվետվությունները:

ԼՍԵՑԻՆ - **2.** Ամբիոնների՝ դպրոցների, մանկապարտեզների և այլ կրթական հաստատությունների հետ համագործակցության ծրագրերի մասին:

*Զեկուցողներ*՝ ամբիոնների վարիչներ

Ք.Հովհաննիսյանը ներկայացրեց, որ իրենց ամբիոնը և մասնավորապես ինքը բազմաթիվ առցանց հանդիպումներ է ունեցել դպրոցների մեթոդմիավորումների հետ, որոնք վերածվել են մասնագիտական սեմինարների: Ինչի կապակցությամբ Հ.Խաչատրյանն առաջարկեց այդ հանդիպումներին համակարգային բնույթ տալ՝ մասնավորելով գիտակրթական նպատակները և խնդիրները, որպեսզի դրանք հնարավոր լինի համարել արդյունավետ, նախապես պլանավորած ու կազմակերպված հետևողական աշխատանք:

Այս կապակցությամբ նշվեց, որ ֆակուլտետի շատ դասախոսներ են բուհի շրջանակներից դուրս վերապատրաստումներ ու քննարկումներ իրականացնում. անհրաժեշտ է դրանք բերել մեր բուհի գիտակրթական դաշտ և ներգրավել նաև մեր ուսանողներին:

Անդրադարձ եղավ ՈՒԳԸ կազմակերպած մեդիակրթության շաբաթվա շրջանակներում իրականացվող սեմինարներին և նշվեց, որ շատ կարևոր է, որ սեմինարների շարքն այդ հարթակում անընդհատական լինի, հետաքրքիր զեկուցումներով հանդես գան նաև դպրոցների և մանկապարտեզների մեր գործընկերները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Լ.Տեր-Գրիգորյանը, Ա.Դալլաքյանը, Հ.Խաչատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **3.** Ասպիրանտների ատեստավորման մասին:

*Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Լ.Պողոսյանը, Ն.Տողանյանը, Գ.Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հիմք ընդունելով ամբիոնի նիստի քաղվածք՝ ատեստավորել՝

1. Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ՝ Տաթևիկ Հակոբյանին *(անցավ միաձայն),*
2. Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ՝ Մերի Հովհաննիսյանին*(անցավ միաձայն):*

ԼՍԵՑԻՆ - **4.** «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերը հրապարակային պաշտպանության երաշխավորելու մասին:

*Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ*

*Ամբիոնների վարիչները նշեցին, որ նախապաշտպանությունները մեկնարկել են, անհրաժեշտություն է զգացվում մի քանի շերտով, մի քանի անգամ անդրադառնալ և կարգավորել որոշ բովանդակային, տեխնիկական հարցեր:*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Բ.Նահապետյանը, Լ.Պողոսյանը, Ա.Մարտիրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ամբիոններում կազմակերպել և ավարտին հասցնել նախապաշտպանությունները, քաղվածքները ներկայացնել ս/թ դեկտեմբերի 15-ին:

ԼՍԵՑԻՆ - 5. Մանկավարժական պրակտիկաների մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի պրակտիկայի ընթացք (ուսումնաճանաչողական պրակտիկա),
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսերի և հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի պրակտիկայի արդյունքներ (մանկավարժահետազոտական պրակտիկա),
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսեր (ամփոփիչ-գնահատողական) արդյունքներ և պրակտիկայի թղթապանակի պաշտպանության նախապատրաստում:
- Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ»,«Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ընթացքի և արդյունքների մասին:

*Զեկուցողներ՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան Հ.Պողոսյան*

*/Հաշվետվությունները կցվում են:/*

*Լ.Պողոսյանը մտահոգություն հայտնեց այն հանգամանքից, որ պրակ-տիկայի ընթացքում ուսանողները հաճախ հնարավորություն չեն ունենում դպրոցում կիրառելու բուհում իրենց սովորածը, այլ ընդօրինակում են միայն դպրոցի ուսուցիչների աշխատանքը, քանի որ վերջիններիս պահանջն է դա: Պետք է հետևել և աշխատել դպրոցների հետ, որ ուսանողները դպրոց տանեն այն գիտական նորույթները, որ սովորում են բուհում. դա նպաստավոր հանգամանք է նաև դպրոցի համար :*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ք.Հովհաննիսյանը, Ք.Ասմարյանը, Հասմիկ Խաչատրյանը:
Հ.Խաչատրյանը պրակտիկայի ղեկավարների խնդրեց ուշադրության կենտրոնում պահել հատկապես նոր վերականգնված ուսանողների պրակտիկայի կազմակերպման և ընթացքի հարցը:
Հասմիկ Խաչատրյանն ընդգծեց առցանց գործիքներից օգտվելու հնարավորությունը պրակտիկայի ժամանակ, դրանց արդյունավետությունը պրակտիկաների ընթացքում հատկապես կոնֆերանսների, դպրոցական սեմինարների մասնակցելու տեսանկյունից:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

*Ընթացիկ հարցեր*

ԼՍԵՑԻՆ- 1.Ֆակուլտետի տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում:

*Զեկուցող՝ Հ. Խաչատրյան*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մ.Իսպիրյանը, Ա.Մանուկյանը, Լ.Պողոսյանը, Ն.Տողանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել սկզբնական կրթության ֆակուլտետի տարեկան հաշվետվությունը:
*Անցավ միաձայն:*

ԼՍԵՑԻՆ - **2.** Ավարտական աշխատանք գրող ԲԿԾ (առկա, հեռակա) ուսանողների, ղեկավարների և թեմաների հաստատում:

*Զեկուցող՝Հ.Խաչատրյան, ամբիոնների վարիչներ*

*/Քաղվածքները կցվում են:/*

*Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները հաստատվել են նախորդ խորհրդի նիստով, սակայն ունենք վերականգնված և նախորդ տարիներին ամփոփիչ ատեստավորումը չհաղթահարած ուսանողներ, որոնց թեմաները ևս նախատեսված ժամկետներում պետք է հաստատվեն:*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Լ.Պողոսյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան
Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

/ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

2023թ. փետրվարի 7-ին տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի հերթական նիստը (բանավոր հարցման կարգով):

Խորհրդի 25 անդամներից մասնակցել են 25-ը:

ՕՐԱԿԱՐԳ - ՀՊՄՀ գիտական խորհրդի կազմում թեկնածուներ առաջադրելու հարցը:

*Զեկ.՝ Հ. Խաչատրյան*

ԼՍԵՑԻՆ – ՀՊՄՀ գիտական խորհրդի կազմում թեկնածուներ առաջադրելու հարցը:

*Զեկ.՝ Հ. Խաչատրյան*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գ.Հայրապետյանը, Ս.Մարությանը, Ք.Ասմարյանը, Լ.Պողոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՊՄՀ գիտական խորհրդի կազմում առաջադրել Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բորիս Սերգեյի Նահապետյանի, Ա.Տեր-Գրիգորյանի անվ. մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջուլիետա Հարությունի Գյուլամիրյանի, Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների դոկտոր Վլադիմիր Սնանի Կարապետյանի թեկնածությունները:

*Անցավ միաձայն:*

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

Դեկտեմբերի 26-ին՝ ժամը 14.30-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը:

*Օրակարգ՝*

| | |
|---|---|
| 1. 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման և քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին. | Ա.Դալլաքյան |
| • հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 3-րդ կուրսի քննաշրջանի արդյունքներ,<br>• առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքներ,<br>• հեռակա ուսուցման համակարգի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերի 1-ին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման աշխատանքներ,<br>• հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներ: | |
| 2. Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների ամփոփիչ ատեստավորման մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների մասին: | Ա.Դալլաքյան |
| 3. Ամբիոնների՝ 2021-2022թթ. կատարած գիտական և հետազոտական աշխատանքների արդյունքների մասին: | Մբիոնների վարիչներ |
| 4. Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և արդյունքների մասին. | |
| • առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի շարունակական մանկավարժական պրակտիկաների արդյունքների մասին հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պրակտիկաների նախապատարստական աշխատանքների մասին: | Ա. Միքայելյան<br>Ա. Ղազարյան |
| 5. Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին: | |
| • Որակի ապահովման խումբ<br>• Ուսումնամեթոդական խումբ<br>• Համալսարան-դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում | Լ.Պողոսյան<br>Ջ.Գյուլամիրյան<br>Ա.Խուգեյան |

- Կամավորական գործունեություն Ի.Պոնոմորենկո

6.Ընթացիկ հարցեր:

**ԼՍԵՑԻՆ -** **1.** 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման և քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին.

- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 3-րդ կուրսի քննաշրջանի արդյունքներ,
- առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքներ,
- հեռակա ուսուցման համակարգի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերի 1-ին կիսամյակի քննաշրջանի կազմակերպման աշխատանքներ,
- հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներ:

*Զեկուցող՝ Ա.Դալլաքյան*

*/Հաշվետվությունը կցվում է:/*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Զ.Գյուլամիրյանը, Լ.Պողոսյանը, Ք.Հովհաննիսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** Ընդունել ի գիտություն:

**ԼՍԵՑԻՆ -** **2.** Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների ամփոփիչ ատեստավորման մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների մասին:

*Զեկուցող՝ Ա.Դալլաքյան*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Զ.Գյուլամիրյանը, Ա.Դալլաքյանը, Հ.Խաչատյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –**
1. Ընդունել ի գիտություն:
2. 28.12.2022-ին ներկայացնել մագիստրոսական կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների՝ ամփոփիչ ատեստավորմանը երաշխավորվելու մասին քաղվածքները:

**ԼՍԵՑԻՆ -** **3.** Ամբիոնների՝ 2021-2022թթ. կատարած գիտական և հետազոտական աշխատանքների արդյունքների մասին:

*Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ*

*/Հաշվետվությունները կցվում են:/*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյան, Ա.Միքայելյանը, Գ.Հայրապետյանը:

Հ. Խաչատրյանը խնդրեց ամբիոնների վարիչներին՝ հետևել, որ ուսանողական գիտաժողովին ներկայացված զեկուցումների բոլոր տեքստերը վերջնական տեսքի բերվեն և հանձնվեն Զ.Գյուլամիրյանին, որպեսզի Լ.Պողոսյանը, հունվար ամսվա ընթացքում հեղինակային իրավունք ձեռք բերելով, կազմակերպի դրանց առցանց հրատարակումը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **4.** Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանք-ների և արդյունքների մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի շարունակական մանկավարժական պրակտիկաների արդյունքների մասին ,
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պրակտիկաների նախա-պատարստական աշխատանքների մասին:

*Զեկուցողներ՝ Ա.Միքայելյան,*
*Ա.Ղազարյան*

*/Հաշվետվությունները կցվում են:/*

*Ա.Միքայելյանը հատուկ ընդգծեց, որ առաջիկայում սահմանամերձ շրջաններում կազմակերպվող պրակտիկան պետք է այնպես իրականացվի, որ չտուժի պրակտիկայի բովանդակային բաղադրիչը, և ուսանողի պրակտիկան լիարժեք լինի՝ հակառակ նրա, որ նա պրակտիկան անցկացնում է հեռավոր մարզերում և հնարավորություն չունի հաճախակի և առերես հանդիպելու մեթոդիստներին:*

*Հ.Խաչատրյանը ներկայացրեց Ա.Ղազարյանի հաշվետվությունը և տեղեկացրեց, որ երկու ուսանող՝ հեռակա ուսուցման համակարգի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհիներ Դիանա Տիգրանի Ավետիսյանը և Աստղիկ Վահանի Հովհաննիսյանը չեն մասնակցել պրակտիկային: Նրանք դիմել են համալսարանի պրակտիկայի վարչությանը՝ խնդրելով հնարավորություն տալ կրկնելու պրակտիկան, դիմումին կցել են բժշկի թուղթ: Եթե ուսանողների դիմումները բավարարվեն, ապա հնարավոր կլինի նրանց պրակտիկան կազմակերպել 2023 թվականի փետրվարին անհատական կարգով:*

*Դեկանը խնդրեց ամբիոնների վարիչներին և մեթոդիստներին զգոն լինել, պրակտիկայի ընթացքում աջակցել ուսանողներին, իսկ բացակայությունների առկայության դեպքում ժամանակին տեղեկացնել դեկանատին՝ ծագած խնդիրները ժամանակին և արդյունավետ լուծելու համար:*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Զ.Գյուլամիրյանը, Ա.Թոփուզյանը, Հ.Խաչատրյանը, Լ.Պողոսյանը:

Հ.Խաչատրյանը տեղեկացրեց, որ պրակտիկայի վարչություն են ներկայացվել պրակտիկաների կազմակերպչական և բովանդակային մասերով բարելավման կարիք ունեցող հարցերի վերաբերյալ առաջարկներ, որոնք առաջիկայում պետք է քննարկվեն: Ապա նաև խնդրեց այս պրակտիկաների ավարտին էլ ներկայացնել բարելավման կարիք ունեցող առաջարկություններ, եթե այդպիսիք կան՝ քննարկելու և վարչությանը ներկայացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 5. Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին:

- Որակի ապահովման խումբ
- Ուսումնամեթոդական խումբ
- Համալսարան-դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում
- Կամավորական գործունեություն

*Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան, Զ.Գյուլամիրյան, Ի.Պոնոմորենկո, Ա.Խուգեյան*

*/Հաշվետվությունները կցվում են:/*

*Դիմորդների մասնագիտական կողմնորոշման աշխատանքները ներկայացնող Ա.Խուգեյանը ներկայացրեց, որ բազմաթիվ շրջայցեր են իրականացրել Երևանի և ՀՀ մարզերի դպրոցներ՝ մասնագիտական կողմնորոշման հարցում աշակերտներին ուղղորդելու նպատակով: Դրանց տվյալների համաձայն՝ բավականին աշակերտներ կան, որոնք նպատակ ունեն ՀՊՄՀ դիմելու, սակայն դրանց մեջ այքան էլ շատ չեն Սկզբնական կրթության ֆակուլտետի դիմողները: Հետևաբար կարիք կա աշակերտների և բուհի կապը սերտացնելու, նրանց համալսարան բերելու, կապն ավելի անմիջական դարձնելու:*

*Մասնագիտական կամավորական գործունեություն ծավալող ուսանողներ 1-ին կիսամյակում չեն գրանցվել, փոխարենը գրանցվել են բազմաթիվ տարաբնույթ կամավորական աշխատանքներ: Կամավորական աշխատանքները համակարգող Ի.Պոնոմարենկոն նշեց, որ մասնագիտական կամավորական աշխատանքներ 2022-230 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում չեն ծավալվել, քանի որ ֆակուլտետի ուսումնական պարապմունքները կազմակերպվում են 1-ին հերթափոխով, դասերի ավարտից հետո արդեն մասնագիտական կամավորական գործունեություն ծավալելու ժամանակ գրեթե չի մնում, քանի որ այդ ընթացքում հիմնականում ավարտվում են նաև աշխատանքները դպրոցներում և մանկապարտեզներում:*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Մ.Իսպիրյանը, Ք.Ասմարյանը, Ա.Թոփուզյանը:

Ուսանողների կամավորական գործունեությունը խրախուսելու համար Հ.Խաչատրյանն առաջարկեց համագործակցել ՏՄԱԿ-ների հետ, որտեղ աշխատանքները կազմակերպվում են նաև հանգստյան օրերին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:
2.Հանձնարարել կամավորական *աշխատանքները համակարգող* Ի.Պոնոմարենկոյին համագործակցութուն հաստատել ՏՄԱԿ-ների հետ:
3. Հանձնարարել Լ.Պողոսյանին և Զ.Գյուլամիրյանին՝ ավարտին հասցնել գիտաժողովի նյութերի հրատարակման գործը:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

Փետրվարի 27-ին՝ ժամը 14.30-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 21-ը:

*Օրակարգ*՝

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի և հետազոտական աշխատանքների կազմակերպման մասին. *1-ին կիսամյակի արդյունքներ :* — Ամբիոնների վարիչներ

2. — Ա.Դալլաքյան

- 2022-2023 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների և լուծարային փուլերի մասին,
- 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի (1-5-րդ կուրսեր) առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների և 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանք ների մասին,
- հեռակա ուսուցման համակարգի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերի 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացին առնչվող հարցերի քննարկում:

3. Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման մագիստոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին: — Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ

4.Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխա տանքների և ընթացքի մասին. — Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան, Լ.Պողոսյան

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի պրակտիկայի թղթապանակի պաշտպանության արդյունքներ,
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսերի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքներ և ընթացք (շարունակական ուսումնաճանաչողական պրակտիկա),
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների ընթացքի մասին,
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքներ (մանկավարժահետազոտական պրակտիկա):

5. Ամբիոնների կրտսեր գիտաշխատողների (լաբորանտների) Արիմբյուրոյի նախագահ աշխատանաքային գործունեությունը ֆակուլտետում:

Ա. Խուզեյան

6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի և հետազոտական աշխատանքների կազմակերպման մասին. *1-ին կիսամյակի արդյունքներ :*

*Զեկուցող՝* Ամբիոնների վարիչներ

*/Հաշվետվությունները կցվում են:/*

Ամբիոնների վարիչները ներկայացրին, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման գործընթացն առաջին կիսամյակում բնականոն հունով է կազմակերպվել:

Զ.Գյուլամիրյանը նշեց, որ մարտի կեսերին կիրականացվի նախապաշտպանության առաջին փուլը: Արտառոց դեպքեր չկան:

Լ.Մանուկյանը ներկայացրեց, որ նախօրոք հաշվետվությունների համար համակարգ էին ստեղծել, որտեղ պարբերաբար հաշվետվություն են ներկայացրել և՛ դասախոսները, և՛ ուսանողները:

Ք. Հովհաննիսյանը ևս տեղեկացրեց որ մարտի մեջ նախապաշտ-պանություն պետք է իրականցվի:

Քանի որ Մանկավարժության ամբիոնում ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ատեստացիայի առաջին փուլը նախատեսված է մարտի առաջին կեսին, հարցի հաղորդումը կներկայացվի ատեստացիայից հետո՝ հաջորդ նիստին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Ասմարյանը, Լ.Պողոսյանը, Ա.Դալլաքյանը:

Լ.Պողոսյանը ամբիոնների վարիչների ուշադրությունը բևեռեց ֆակուլտետիկողմից մշակված, հաստատված և ամբիոններում կիրառվող մագիստրոսի անհատական աշխատանքի պլանին: Հորդորեց հետևել, որպեսզի ղեկավարներն առաջնորդվեն աշխատանքային պլանով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **2.**

- 2022-2023 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների և լուծարային փուլերի մասին,
- 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի (1-5-րդ կուրսեր) առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների և 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների մասին,
- հեռակա ուսուցման համակարգի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերի 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացին առնչվող հարցերի քննարկում:

*Զեկուցող՝ Ա.Դալլաքյան*

*/Հաշվետվությունները կցվում են:/*

*Ա.Դալլաքյանը ներկայացրեց, որ լուծարային երկրորդ փուլը դեռևս ընթացքի մեջ է, որի մասին հաշվետվություն կներկայացվի խորհրդի հաջորդ նիստին:*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ջ.Գյուլամիրյանը, Ա.Դալլաքյանը, Հ.Խաչատյանը:

Հ.Խաչատրյանն առաջարկեց ամբիոնների կողմից ամեն ամիս իրականացվող մշտադիրտարկման ցուցիչների մեջ ավելացնել նաև դասախոսների կողմից ստուգման ձևերի և քննությունների ամփոփ տվյալները, տեղեկագրերը Classroom-ի հարթակում տեղադրելը, որպեսզի ուսանողները ևս տեղեկացված լինեն իրենց գնահատականների և լուծարքների մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2.Հանձնարարել ամբիոնների վարիչներին և ամբիոնների մասնագետներին ամբիոնների կողմից ամեն ամիս իրականացվող մշտադիրտարկման ցուցիչների մեջ ավելացնել դասախոսների կողմից ստուգման ձևերի և քննությունների ամփոփ տվյալների, տեղեկագրերի տեղադրումը Google-classroom էլեկտրոնային հարթակում՝ յուրաքանչյուր դասընթացի էջում:

ԼՍԵՑԻՆ - **3.** Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին:

*Զեկուցող՝ ամփոփիչ ատեստավորման*

*հանձնաժողովի նախագահ Ժ.Մարգարյան*

*/Հաշվետվությունը կցվում է:/*

*Քանի որ նախագահը չէր կարողացել ներկա գտնվել նիստին, հաշվետվությունն ընթերցեց ֆակուլտետի խորհրդի հախագահ՝ Հ.Խաչատրյանը*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյան, Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

**2**.Հաշվետվությունը տրամադրել ամբիոններին՝ դրանում առկա առաջարկությունները քննարկելու և առաջիկա աշխատանքներում նկատի ունենալու համար:

ԼՍԵՑԻՆ - **4.** Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխա-

տանքների և ընթացքի մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի պրակտիկայի թղթապանակի պաշտպանության արդյունքներ,
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսերի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքներ և ընթացք (շարունակական ուսումնաճանաչողական պրակտիկա),
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների ընթացքի մասին,

- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքներ (մանկավարժահետազոտական պրակտիկա):

*Զեկուցողներ՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան*

*/Հաշվետվությունները կցվում են:/*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Զ.Գյուլամիրյանը, Հ.Խաչատրյանը, Լ.Պողոսյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 5. Ամբիոնների կրտսեր գիտաշխատողների (լաբորանտների) աշխատանքային գործունեությունը ֆակուլտետում *:*

*Զեկուցող՝ արհմբյուրոյի նախագահ Ա. Խուգեյան*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Հովհաննիսյանը, Ք.Ասմարյանը, Զ.Գյուլամիրյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ – Հարցը հետաձգել և լսել հաջորդ նիստին՝ զեկուցողի բացակայությամբ պայմանավորված:

ԼՍԵՑԻՆ - **Ընթացիկ հարցեր:**

ԼՍԵՑԻՆ – 1. Մանկավարժական գիտությունների թեկնածու, Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Աիդա Գրիշայի Կարապետյանին մանկավարժության գծով դոցենտի գիտական կոչման երաշխավորելու հարցը:

*Զեկուցող՝ Լ. Պողոսյան*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Զ.Գյուլամիրյանը, Ա.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մանկավարժական գիտությունների թեկնածու, Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Աիդա Գրիշայի Կարապետյանին դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը դրական երաշխավորությամբ առաջադրել համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը:

*Ֆակուլտետի խորհրդի 25 անդամներից ներկա էին 21-ը, որոնցից կողմ քվեարկեցին 21-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:*

ԼՍԵՑԻՆ - **2.** ՈՒԳԸ 2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման հարցը:

*/Աշխատանքային պլանը կցվում է:/*

*Զեկուցող՝ ՈՒԳԸ նախագահ Կ.Ավալյան*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Մարտիրոսյանը, Մ.Վարդանյանը, Ա.Մանուկյանը Լ.Պողոսյանը:

Լ.Պողոսյանն առաջարկեց ՈՒԳԸ աշխատանքային պլանը կազմելիս այն զուգադրել ֆակուլտետի ռազմավարական ծրագրի հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ՈՒԳԸ 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ - **3.** Նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կողմից պատրաստվող «Նախադպրոցական կրթության որակի փորձագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի կազմության ընթացքի մասին հարցը:

*Զեկուցող՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Մանուկյան*

*Լ. Մանուկյանը ներկայացրեց, որ ծրագիրը նոր չէ. այն արդեն մշակված եղել է ամբիոնում և ունեցել է միջազգային ուղղվածություն. համատեղ կրթական ծրագիր Մինսկի և Սանկտ-Պետերբուրգի մանկավարժական բուհերի հետ հեռավար ուսուցման համատեքստում նախատեսված հեռակա ուսուցման համակարգի ուսանողների համար: Ամբիոնի աշխատանքային խումբն այժմ աշխատում է անհրաժեշտ փաստաթղթերը ամբողջացնելու և մասնագիտական ծրագիրը առկա ուսուցման համակարգի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ք.Հովհաննիսյանը, Ա.Միքայելյանը:

Հ.Խաչատրյանը նշեց, որ հարկավոր է անպայման իրականացնել աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն՝ պարզելու. կա՞ արդյոք այդ մասնագետների պահանջարկ աշխատաշուկայում: Սա շատ կարևոր փաստաթուղթ է, որի կարիքը ծրագրի հաստատման ժամանակ անպայման կլինի:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:

**2**. Հանձնարարել գիտության և միջազգային համագործակցության հարցերով փոխդեկան Լ.Պողոսյանին հանդիպումներ և քննարկումներ ունենալ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի աշխատանքային խմբի հետ:

ԼՍԵՑԻՆ – **4.**Ակադեմիական ազնվության, բարեվարքության և հետազոտական աշխատանքներում հղումների կարգին առնչվող հարցեր:

*Հաղորդող՝Հ.Խաչատրյան*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Լ.Տեր-Գրիգորյանը, Ալլա Դալլաքյանը, Ա.Մարտիրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

**2**. Նախապաշտպանություններին նախընթաց ամբիոններում ստեղծել փոքրիկ մասնագիտական խմբեր ամբիոնի փորձառու դասախոսներից, ովքեր կաշխատեն ուսանողներրի հետ և կուսումնասիրեն նրանց աշխատանքները ակադեմիական ազնվության և հղումների պահանջների պահպանման ուղղությամբ:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

Մարտի 28-ին՝ ժամը 14.30-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 20-ը:

*Օրակարգ*՝

| | |
|---|---|
| 1. 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի (1-5-րդ կուրսեր) առաջին կիսամյակի լուծարային փուլերի մասին: | Ա.Դալլաքյան |
| 2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին: | Ամբիոնների վարիչներ |
| 3. Միջազգային համագործակցության ուղղությամբ տարվող աշխատանքների մասին: | Լ.Պողոսյան, ամբիոնների վարիչներ |
| 4. Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և ընթացքի մասին. | Ա. Միքայելյան |
| • հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի արդյունքներ, | Ա. Ղազարյան<br>Լ.Պողոսյան |
| • առկա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստում, | |
| • առկա ուսուցման համակարգի մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստում, | |
| • հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի ընթացք: | |

5. Ընթացիկ հարցեր:

**ԼՍԵՑԻՆ -** 1. 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի (1-5-րդ կուրսեր) առաջին կիսամյակի լուծարային փուլերի մասին:

*Զեկուցող՝ Ա.Դալլաքյան*

*/Հաշվետվությունը կցվում է:/*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Ա.Մանուկյանը, Բ.Նահապետյանը, Զ.Գյուլամիրյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** Ընդունել ի գիտություն:

**ԼՍԵՑԻՆ -** **2.** Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

*Բոլոր ամբիոնների վարիչները ներկայացրին և վստահեցրին, որ ուսանող-ների հետ անցկացրած նախապատրաստական աշխատանքների և ատեստավորման արդյունքով խնդրահարույց դեպքեր չկան :*

*Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Գ.Հայրապետյանը, Ա.Դալլաքյանը, Զ Մանուկյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –**
1. Ընդունել ի գիտություն:
2. Առկա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ և մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ս/թ ապրիլի 17-21-ը, իսկ հեռակա ուսուցման համակարգի բակալավրական ծրագրերի 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների համար՝ ս/թ ապրիլի 27-ից մինչև մայիսի 5-ը:

**ԼՍԵՑԻՆ -** **3.** Միջազգային համագործակցության ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

*Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան, ամբիոնների վարիչներ*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Ա.Դալլաքյանը, Հ.Խաչատրյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** Քանի որ հիմնական զեկուցող Լուսինե Պողոսյանը հարգելի պատճառով չէր մասնակցում նիստին, հարցը որոշվեց հետաձգել այն հանձնարարությամբ, որ ամբիոնները ներկայացնեն միջազգային ծրագրերի, համագործակցությունների առաջարկություններ կամ նախագծեր, համագործակցությունը ակտիվացնող գործուն մեխանիզմներ:

**ԼՍԵՑԻՆ -** **4.** Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքնե-րի և ընթացքի մասին.

- հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի արդյունքներ,
- առկա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստում,
- առկա ուսուցման համակարգի մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստում,
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի ընթացք:

*Զեկուցողներ՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան*

*/Հաշվետվությունները կցվում են:/*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Հովհաննիսյանը, Եվա Մնացականյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:

**2.** Մանկավարժական պրակտիկային չմասնակցած հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսերի հետևյալ ուսանողների մասին տեղեկատվությունը տրամադրել պրակտիկայի վարչությանը և քննարկել նրանց հետ կապված հետագա գործընթացները. Նինա Բաբաջանյան՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բկծ 3-րդ կուրսի ուսանողուհի, Սուսաննա Ղազարյան «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բկծ 3-րդ կուրսի ուսանողուհի:

**3.**ՀՊՄՀ պրակտիկայի կենտրոնի հետ քննարկել առկա ուսուցման համակարգի 3-րդ կուրսերի 2-րդ կիսամյակում պրակտիկայի կազմակերպման ժամկետների նպատակահարմարության հարցը:

ԼՍԵՑԻՆ - **Ընթացիկ հարցեր:**

ԼՍԵՑԻՆ – Մանկավարժության ամբիոնի կողմից ղեկավարվող ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի և հետազոտական աշխատանքների կազմակերպման մասին. 1-ին կիսամյակի արդյունքներ:

*Հաղորդող՝ Մանկավարժության ամբիոնի վարիչ Ա.Թոփուզյան*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Լ.Տեր-Գրիգորյանը, Ք.Ասմարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

Ապրիլի 26-ին՝ ժամը 13.30-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը:

*Օրակարգ*՝

1. 2022-2023 ուստարվա առկա ուսուցման համակարգի շրջանա-վարտների ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին:

Ա.Դալլաքյան

2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության արդյունքների քննարկում և հաստատում:

Ամբիոնների վարիչներ

3. Մանկավարժական պրակտիկաների ընթացքի ներկայացում և քննարկում.

Ա. Միքայելյան

Ա. Ղազարյան

Լ.Պողոսյան,

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ և 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների ընթացք,
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքներ,
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքներ:

4.Ընթացիկ հարցեր:

- Միջազգային համագործակցության ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

Լ. Պողոսյան

- Ուսանողների շրջանում իրականացրած հարցման արդյունքների մասին:

ամբիոնների վարիչներ

Հ.Խաչատրյան

- 2022-23 ուստարվա մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության հարցաշարերի հաստատում:

Հ.Խաչատրյան

ԼՍԵՑԻՆ - 1. 2022-2023 ուստարվա առկա ուսուցման համակարգի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին:

*Զեկուցող՝ Ա.Դալլաքյան*

*/Հաշվետվությունը կցվում է:/*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Հովհաննիսյանը, Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **2.** Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտ պանության արդյունքների քննարկում և հաստատում:

*Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ*

Մանկավարժության ամբիոնի վարիչ Ա.Թոփուզյանը ներկայացրեց, որ առկա ուսուցման համակարգում մագիստրոսական 2 թեզ է գրվում իրենց ամբիոնի գծով, երկուսն էլ պատրաստ են և գրախոսված, ավարտական աշխատանքները ևս անցել են նախապաշտպանությունը և բոլոր ուսանողների աշխատանքները երաշխավորվել են պաշտպանության:

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Մանուկյանը տեղեկացրեց, որ առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ավարտական կուրսերի բոլոր ուսանողներն անցել են նախապաշտպանություն և նրանց աշխատանքները երաշխավորվել են հրապարակային պաշտպանության: Քաղվածքներն առկա են: Բացառություն է կազմում 1 դեպք. «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողուհի Մարգարիտա Գևորգյանը չի կարողացել ներկայանալ նախապաշտպանությանը, քանի որ ծննդաբերել է, և հետևաբար ուսանողու աշխատանքը չի երաշխավորվել: Մ.Գևորգյանը տեղեկացրել է, որ պատրաստվում է տարեկետման դիմում ներկայացրել:

Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ջ.Գյուլամիրյանը ևս հաղորդեց, որ առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ավարտական կուրսերի բոլոր ուսանողների աշխատանքները երաշխավորվել են պաշտպանության: Քաղվածքներն առկա են:

Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ք.Հովհաննիսյանը ներկայացրեց, որ առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ավարտական կուրսերի բոլոր ուսանողների աշխատանքները երաշխավորվել են պաշտպանության: Քաղվածքներն առկա են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Գ.Հայրապետյանը, Ա.Դալլաքյանը, Հ.Խաչատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2.Սահմանված ժամկետներում ամբիոններում ավարտել նաև հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի ավարտական

կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանության գործընթացը:

ԼՍԵՑԻՆ - **3.** Մանկավարժական պրակտիկաների ընթացքի ներկայացում և քննարկում.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ և 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների ընթացք,
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքներ,
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքներ:

*Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան, Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան*

*Ա.Ղազարյանը տեղեկացրեց, որ «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկային չի մասնակցել Սոնա Մանուկյանը, ում մանկահասակ երեխան այդ ժամանակահատվածում հիվանդացել է, և ուսանողուհին չի կարողացել մասնակցել պրակտիկային: Նա նաև տեղեկացրեց, որ ուսանողուհին ցանկանում է մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար սահմանված տարկետման իրավունքից օգտվել: Նույն կուրսի 1-ին կուրսից Սիրանուշ Հարությունյանը ևս հաճախումների հետ կապված դժվարություններ է ունեցել, քանի որ նոր է ծննդաբերերել, բայց կարողացել է հաղթահարել հաճախումների՝50% -ի սահմանված շեմը:*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Թոփուզյանը, Ա.Դալլաքյանը, Ա.Մանուկյանը,:

Ելույթ ունեցողների կողմից կողմից անդրադարձ կատարվեց մի քանի հարցերի.

ա/ ՄԿԾԱ 1-ին կուրսի պրակտիկայի ժամանակահատվածը համընկնում էր քննաշրջանի հետ և ֆակուլտետում պարապմունքների քանակը բավարար չէ դասալսումներ կազմակերպելու համար. զուցե առաջարկ ներկայացվի փոխել ժամանակացույցը.

բ/ դպրոցներում առաջին հերթով աշխատող մագիստրոսները դժվարություններ են ունենում պրակտիկային մասնակցելու, քանի որ շատ տնօրեններ թույլ չեն տալիս նրանց առավոտյան ժամերին բացակայել դպրոցից: Հավանաբար հարկ կլինի կապ հաստատել և քննարկումներ կազմակերպել, տնօրենների հետ, որպեսզի նրանք խրախուսեն և նպաստեն իրենց մասնագիտական որակը բարձրացնելու ցանկություն ունեցող ուսուցիչներին:

Հ.Խաչատրյանը մտահոգություն հայտնեց այն մասին, որ ուսանողները դժվարանում են SWOT վերլուծություն կատարել, որը պրակտիկայի թղթապանակի կարևոր պահանջն է ու հաջողության ցուցանիշը: Նա առաջարկեց Լ.Պողոսյանին՝ սեմինարներ կազմակերպել և՛ ուսանողների, և՛ դասախոսների համար: Առաջարկվեց նաև պրակտիկայի ղեկավարներին հանձնարարել՝ ներկայացնել առաջարկություններ՝ պրակտիկայի արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1.Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել պրակտիկաների ղեկավարներին՝ հաշվետվություններում ներկայացված և քննարկումների արդյունքում ձևակերպված առաջարկություններն ամբողջացնել՝ ՀՊՄՀ պրակտիկայի կենտրոն ներկայացնելու համար:
3. Հանձնարարել փոխդեկան Լ.Պողոսյանին՝ ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության հետ համատեղ կազմել ժամանակացույց և ըստ այդմ իրականացնել SWOT վերլուծության վերաբերյալ սեմինարներ ուսանողների և դասախոսների համար:

**ԼՍԵՑԻՆ** - **Ընթացիկ հարցեր:**

**ԼՍԵՑԻՆ** – 1. Միջազգային համագործակցության ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

*Զեկուցող՝ Լ.Պողոսյան*

*Լ.Պողոսյանը ներկայացրեց, որ միջազգային համագործակցության խնդիրը ֆակուլտետի ամենից խոցելի բնագավառն է: Միջազգային կապերն առավելապես առցանց կոնֆերանսների ձևաչափով է իրականցվում: Ընդ որում՝ միջազգային համագործակցության շրջանակում պակաս է ուսանողների մասնակցությունը: Լ.Պողոսյանը հորդորեց ամբիոններին՝ հետևել բուհի ընդհանուր միջազգային համագործակցության ծրագրին, որտեղ գործընթացները մշակված են յուրաքանչյուր տարվա համար: Կարելի է միջազգային վեբինարների, ցուցահանդեսների, սեմինարների ձևաչափերն էլ կիրառել:*

*Աշխատանքներն արդյունավետ հունի մեջ դնելու համար բանախոսն առաջարկեց յուրաքանչյուր ամբիոնում ունենալ միջազգային համագործակցության հարցերը կազմակերպող պատասխանատու:*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Հ.Խաչատրյանը, Ա.Միքայելյանը, Զ.Գյուլամիրյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ընդունել ի գիտություն:

**ԼՍԵՑԻՆ** – 2. 2022-23 ուստարվա մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության հարցաշարերի հաստատում:

*Զեկուցող՝ Հ.Խաչատրյան*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ա. Դալլաքյանը, Մ. Վարդանյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** Հաստատել 2022-23 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության հարցաշարերը:

**ԼՍԵՑԻՆ –** 3. Ուսանողների շրջանում իրականացրած հարցման արդյունքների մասին:

*Զեկուցող՝ Հ.Խաչատրյան*

*Հ.Խաչատրյանը ներկայացրեց բակալավրի կրթական ծրագրերի (առկա/հեռակա) ուսանողների շրջանում իրականացրած հարցման արդյունքները ՝ ընտրովի դասընթացների ընտրության վերաբերյալ:*

*/Զեկուցումը կցվում է:/*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Լ. Պողոսյանը, Ք. Հովհաննիսյանը, Ա.Մարտիրոսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ- 1.**Ընդունել ի գիտություն:

2.Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ վերանայել և համալրել մագիստրոսի կրթական ծրագրերով նախատեսված ընտրովի դասընթացների ցանկը:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

Հունիսի 13-ին՝ ժամը 11.00-ին, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ *(բանավոր հարցում):*

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 25-ը:

*Օրակարգ*՝

Մանկավարժական գիտությունների թեկնածու, Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս Աննա Աշոտի Սիմոնյանին մանկավարժության գծով դոցենտի գիտական կոչման երաշխավորելու հարցը:

ԼՍԵՑԻՆ – Մանկավարժական գիտությունների թեկնածու, Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս Աննա Սիմոնյանին մանկավարժության գծով դոցենտի գիտական կոչման երաշխավորելու հարցը:

*Զեկուցող՝ Հ.Խաչատրյան*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ա.Դալլաքյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մանկավարժական գիտությունների թեկնածու, Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս Աննա Աշոտի Սիմոնյանին մանկավարժության գծով դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը դրական երաշխավորությամբ առաջադրել համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը:

*Ֆակուլտետի խորհրդի 25 անդամներից ներկա էին 25 -ը, որոնցից կողմ քվեարկեցին 25-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:*

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

Հունիսի 26-ին՝ ժամը 14.20-ին, տեղի ունցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ: Խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը:

*Օրակարգ*՝

1. 2022-2023 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին: — Ա.Դալլաքյան

2. 2022-2023 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի և հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին: — Հանձնաժողովների նախագահներ

3.Մանկավարժական պրակտիկաների և թղթապանակների պաշտպանության արդյունքների մասին. — Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր (շարունակական ուսումնաճանաչողական մանկավարժական պրակտիկա)
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր (կիրառական մանկավարժական պրակտիկա)

4.Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին.

- Ուսումնական հարցեր — Ա.Դալլաքյան
- Որակի ապահովման խումբ — Լ.Պողոսյան,
- Ուսումնամեթոդական խումբ — Զ.Գյուլամիրյան
- Մանկավարժական պրակտիկա — Ա.ՄԻքայելյան, Ա.Ղազարյան
- Համալսարան- դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում — Ա.Խուգեյան
- Կամավորական գործունեություն — Ի.Պոնոմորենկո

ԼՍԵՑԻՆ - 1. 2022-2023 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին:

*Զեկուցող՝ Ա.Դալլաքյան*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը, Ա.Միքայելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Քանի որ քննաշրջանը դեռևս ընթացքի մեջ է, հարցը լսել հաջորդ նիստին:

ԼՍԵՑԻՆ - **2.** 2022-2023 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի և հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին:

*Զեկուցողներ՝ ամփոփիչ ատեստավորման նախագահներ*

*Քանի որ նախագահները ներկա չէին նիստին, հաշվետվությունները ներկայացրեց խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյանը:*

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Զ.Գյուլամիրյանը, Բ.Նահապետյանը, Լ.Պողոսյանը, Հ.Խաչատրյանը:

Հ.Խաչատրյանը մասնավորապես նշեց, որ կարելի է բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ներառել դասընթաց և կամ մոդուլ որևէ դասընթացի համատեքստում՝ նվիրված հետազոտությունների քանակական վերլուծությանը, ինչպես նաև «Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ» դասընթացում ներառել մոդուլ ուղղված PP ներկայացումներ պատրաստելուն:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

**2.**Հաշվետվությունները քննարկել ամբիոններում՝ և ներկայացնել առաջարկություններ ամփոփիչ ատեստավորման ողջ գործընթացի հետագա բարելավման հետ կապված:

ԼՍԵՑԻՆ - 3.Մանկավարժական պրակտիկաների և թղթապանակների պաշտպանության արդյունքների մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր (շարունակական ուսումնաճանաչողական մանկավարժական պրակտիկա)
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր (կիրառական մանկավարժական պրակտիկա)

*Զեկուցողներ՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան*

*/Հաշվետվությունները կցվում են:/*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Ալլա Դալլաքյանը, Զ.Գյուլամիրյանը, Ս.Մարությանը, Ն. Տողանյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** 1. Ընդունել ի գիտություն:

2. Պրակտիկայի բարելավման ուղղությամբ առաջարկություններն ամբողջացնել և ներկայացնել պրակտիկայի կենտրոն:

**ԼՍԵՑԻՆ -** 4.Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին.

- Ուսումնական հարցեր
- Որակի ապահովման խումբ
- Ուսումնամեթոդական խումբ
- Մանկավարժական պրակտիկա
- Համալսարան- դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում
- Կամավորական գործունեություն

*Զեկուցողներ՝ Ա.Դալլաքյան, Լ.Պողոսյան, Զ.Գյուլամիրյան, Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան, Ա.Խուգեյան, Ի.Պոնոմորենկո*

*/Հաշվետվությունները կցվում են:/*

*Ա.Դալլաքյանը ներկայացրեց, որ հեռակա համակարգում միջանկյալ քննություններն անմիջապես հաջորդում են ուսումնական գործընթացին, ինչը ուսանողների օբյեկտիվ դժգոհությունն է առաջացնում, քանի որ ժամկետները մոտ են և քննաշրջանը դժվար հաղթահարելի են դարձնում: Միջանկյալների կազմակերպման ժամկետները հարկավոր է հետաձգել՝ հաշվի առնելով այդ ժամանակահատվածում նաև խորհրդատվությունները կազմակերպելու անհրաժեշտությունը:*

*Ի.Պոնոմորենկոն առաջարկեց կամավորական աշխատանքների շրջանակում կազմակերպել ուսանողների կարճաժամկետ վերապատրաստում՝ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու կարողությունների ձևավորման ուղղությամբ և կամավորական գործունեությունն իրականացնել այդ շրջանակում ևս:*

*Ա.Խուգեյանը նշեց, որ դիմորդների կողմնորոշմանն ուղղված աշխատանքներում հարկավոր է առավել ակտիվացնել երկարատև համագործակցությունը դպրոցների հետ:*

*Զ.Գյուլամիրյանը նշեց, որ բավականին արդյունավետ է աշխատում կիսամյակից անմիջապես հետո ավարտական աշխատանքների թեմաներն ուսանողներին տրամադրելը, ինչպես նաև կուրսային աշխատանքների թեմաները, դրանց*

*հետազոտական արդյունքները հետագայում ավարտական աշխատանքի վերածելու պրակտիկան:*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Մ.Իսպիրյանը, Հ.Խաչատրյանը, Ա.Միքայելյանը, Ք.Ասմարյանը, Մ. Վարդանյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Ընդունել ի գիտություն:

*ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ*

**ԼՍԵՑԻՆ** – Մանկավարժական գիտությունների թեկնածու, Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Լիդա ՍերյոժայիԱվանեսյանին մանկավարժության գծով դոցենտի գիտական կոչման երաշխավորելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Հ.Խաչատրյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ս.Մարությանը, Գ.Հայրապետյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Մանկավարժական գիտությունների թեկնածու, Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Լիդա Սերյոժայի Ավանեսյանին դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը դրական երաշխավորությամբ առաջադրել համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը:

*Ֆակուլտետի խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը, որոնցից կողմ քվեարկեցին 23-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:*

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

Հուլիսի 7-ին՝ ժամը 11.00-ին, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի ընդլայնված նիստը:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը: Նիստին մասնակցում էին նաև ֆակուլտետի ամբիոնների դասախոսներ:

*Օրակարգ՝*

1. 2022-2023 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին: Ա.Դալլաքյան

2. 2022-2023 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի լուծարային փուլերի նախապատրաստական աշխատանքների մասին: Ա.Դալլաքյան

3. Ֆակուլտետի 2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական, հետազոտական աշխատանքների և խորհրդի ընդունած որոշումների կատարման մասին: Հ.Խաչատրյան

4. Կրթական ծրագրերի և ուսումնական պլանների քննարկում: Լ.Պողոսյան

**ԼՍԵՑԻՆ -** 1. 2022-2023 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունք-ների մասին:

*Զեկուցող՝ Ա.Դալլաքյան*

*/Հաշվետվությունը կցվում է:/*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Զ.Գյուլամիրյանը, Հ.Խաչատրյանը, Լ.Պողոսյանը, Ս. Մարությանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ –** Ընդունել ի գիտություն:

**ԼՍԵՑԻՆ -** 2. 2022-2023 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի լուծարային փուլերի նախապատրաստական աշխատանքների մասին:

*Զեկուցող՝ Ա.Դալլաքյան*

*/Հաշվետվությունը կցվում է:/*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -** Ալ.Դալլաքյանը, Զ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:
**ՈՐՈՇԵՑԻՆ –** Ընդունել ի գիտություն:

**ԼՍԵՑԻՆ -** **3.** Հաշվետվություն ֆակուլտետի 2021-2022 ուստարվա ուսումնադաս-տիարակչական, հետազոտական աշխատանքների և խորհրդի ընդունած որոշումների կատարման մասին:

*Զեկուցող՝ Հ.Խաչատրյան*

*/Հաշվետվությունը կցվում է:/*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ս.Մարությանը, Զ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը, Գ.Հայրապետյանը: *Առաջարկություն եղավ կատարված աշխատանքները գնահատել բավարար:*

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նախագահի ներկայացրած 2022-2023 ուստարվա հաշվետվությունը և բավարար գնահատել կատարված աշխատանքները:

*Ֆակուլտետի խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը, որոնցից կողմ քվեարկեցին 23-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:*

**ԼՍԵՑԻՆ** - 4. Կրթական ծրագրերի և ուսումնական պլանների քննարկում:

*Զեկուցող՝ Լ.Պողոսյան*

*Ֆակուլտետի փոխդեկան Լուսինե Պողոսյանը ներկայացրեց ֆակուլտետի որակի ապահովման խմբի կողմից իրականացված «1-ին կուրսերի ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրից» հարցման արդյունքները: Նա նաև նշեց, որ դրանք հարկավոր է հաշվի առնել առարկայական նկարագրերի և ուսումնամեթոդական փաթեթների վերանայման գործընթացում:*

*/Արդյունքները կցվում են:/*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Զ.Գյուլամիրյանը, Հ. Խաչատրյանը, Ա. Խուզեյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ընդունել ի գիտություն:

***ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ***

**ԼՍԵՑԻՆ** - Սկզբնական կրթության ֆակուլտետի կանոնադրության հաստատման մասին հարցը:

*Զեկուցող՝ Հ.Խաչատրյան*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Մ.Իսպիրյանը, Լ.Պողոսյանը, Զ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը, Ա.Մարտիրոսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել սկզբնական կրթության ֆակուլտետի կանոնադրությունը:

*Ֆակուլտետի խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը, որոնցից կողմ քվեարկեցին 23-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:*

**ԼՍԵՑԻՆ** - Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Քնարիկ Ասլանի Հովհաննիսյանի և նույն ամբիոնի ասիստենտ Մելանյա Սաշայի Բարսեղյանի *«Տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկայի համառոտ դասընթաց»* ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու հարցը:

*Զեկուցող՝ Հ.Խաչատրյան*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Բ.Նահապետյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Քնարիկ Ասլանի Հովհաննիսյանի և նույն ամբիոնի ասիստենտ Մելանյա Սաշայի Բարսեղյանի *«Տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկայի համառոտ դասընթաց»* ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:

*Ֆակուլտետի խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը, որոնցից կողմ քվեարկեցին 23-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:*

**ԼՍԵՑԻՆ** - Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիդա Սերյոժայի Ավանեսյանի և նույն ամբիոնի դասախոս Արմինե Սմբատի Սահակյանի *«Կոմբինատորիկայի, հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրեր(Ստոխաստիկայի տարրեր)»* ուսումնամեթոդական ձեռնարկը հրատա-րակության երաշխավորելու հարցը:

*Զեկուցող՝ Հ.Խաչատրյան*

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** -Եվա Մնացականյանը, Ա.Միքայելյանը, ԱլլաԴալլաքյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիդա Սերյոժայի Ավանեսյանի և նույն ամբիոնի դասախոս Արմինե Սմբատի Սահակյանի *«Կոմբինատորիկայի, հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրեր(Ստոխաստիկայի տարրեր)»* ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատա-րակության:

*Ֆակուլտետի խորհրդի 25 անդամներից ներկա էին 23-ը, որոնցից կողմ քվեարկեցին 23-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:*

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան